# Կարծիք

## Հովսեփյան Նելլի Դավիթի

## «Պետության եվ իրավունքի հիմնախնդիրները XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական ուսմունքներում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական աշխատանքը նվիրված է XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական մտքի և իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրությանը:

Ներկայացված աշխատանքի արդիականությունը, մեր կարծիքով, պայմանավորված է նորովի իմաստավորելու ազգային մշակույթի անցյալի ձեռքբերումները արժևորելու,ինչպես նաև բացահայտելու դրանց պատմական և արդիական նշանակությունը:

Բացի վերոնշյալից, արդի ժամանակաշրջանի մարտահրավերների ու խնդիրների լուծման համար որոշակիորեն կարող է նպաստել նաև հայ քաղաքական և իրավական մտքի պատմության էջերի համակարգված, օբյեկտիվ և անաչառ քննական վերլուծության միջոցով, հատկապես երբ խոսքը վերաբերում է XI+X դարի հայ նշանավոր մտածողների (Գր. Արծրունի, Ա. Բագրատունի, Վ. Բաստամյանց, Մ. Գարագաշյան, Մ. Մամուրյան, Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան, Ն. Ռուսիսյան, Ն. Սվաճյան և այլք) գաղափարական, քաղաքական և իրավական ուսմունքներին, որոնք առաջադիմական էին ոչ միայն իր դարաշրջանի համար, այլև էական դեր են խաղացել հետագա շրջանի հասարակական-քաղաքական և իրավական հայացքների զարգացման գործում :

Քննարկվող աշխատանքի դրական արժանիքներից է նաև այն հանգամանքը, որ հեղինակը լիարժեքորեն է օգտագործել աղբյուրագիտական նյութերը և մասնագիտական գրականությունը, ինչը հնարավորություն է ընձեռել նրան լիովին բացահայտել թեմայի բովանդակությունը, առանձնահատկությունները, իսկ ստացված արդյունքների հիման վրա ձևակերպել է առաջարկություններ ու եզրակացություններ, որոնք ունեն գիտատեսական և գործնական-կիրառական նշանակություն:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունենք որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, գտնում ենք, որ բովանդակային առումով գրախոսվող աշխատանքը ավելի շահեկան կներկայանար, եթե հեղինակը անդրադառնար նաև XIX դարի հայ մտածողների հայեցակարգերին նաև արժեքանության՝ այսինքն ազգային շահերի և հայ հասարակության ընդհանուր բարիքի ու օգտակարության տեսանկյունից:

Երկրորդ, չգիտես ինչու, չի հետազոտվել XIX դարի արևմտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, իրավաբան և փաստաբան Գրիգոր Զոհրապի իրավական, մասնավորապես նրա քրեաիրավական հայացքները, որոնք կարևոր աղբյուր են նշված ժամանակաշրջանի քրեագիտության և քրեական իրավունքի լուսաբանման համար :

Պետք է նշել, սակայն, որ վերը բերված նկատառումներն ունեն մասնավոր և խորհրդատվական բնույթ, որոնք էականորեն չեն կարող ազդել Նելլի Հովսեփյանի աշխատանքի ընդհանուր դրական արժանիքի վրա :

Եզրակացություն. Նելլի Դավիթի Հովսեփյանի Պետության եվ իրավունքի հիմնախնդիրները XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական ուսմունքներում» վերտառությամբ ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է իրավունքի և իրավական մտքի զարգացման համար էական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն ու գործնականորեն հիմնավորված լուծումներ, իսկ հետազոտության արդյունքները կիրառելի են նաև ակադեմիական գործընթացներում:

Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով առաջադրված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01 մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման :

**Պաշտոնական ընդդիմախոս՝**
**իրավաբանական գիտությունների դոկտոր,**
**դոցենտ** **Նազելի Գառնիկի Սուքիասյան**

Նազելի Գառնիկի Սուքիասյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
գիտական քարտուղար՝ Մերի Արթուրի Սարգսյան